ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությամբ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության

02.10.2025թ. –ի թիվ 58-Լ որոշմամբ

Ուժի մեջ է՝ 03.10.2025թ.

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ/ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ

Պայման*	Վարկ/լիզինգ	Վերականգնվող վարկային գիծ	Օվերդրաֆտ
Նվազագույն և առավելագույն գումարը/ ՀՀ դրամ	10,000,000- 3,000,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	Հաճախորդի բանկային հաշիվների միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառության 200%-ի չափով, 10,000,000 ՀՀ դրամից մինչև 200,000,000 ՀՀ դրամ:	Հաճախորդի բանկային հաշիվների վերջին վեց ամսվա միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառության 50%-ի չափով, 5,000,000 ՀՀ դրամից մինչև 50,000,000 դրամ կամ համարժեք արտարժույթ: Բանկը, ելնելով ֆինանսական մոնիթորինգի արդյունքներից, կամ հաճախորդի նախորդ վեց ամսվա բանկային հաշիվների շրջանառությունից, կարող է միակողմանիորեն վերանայել գործող օվերդրաֆթի սահմանաչափը՝ ընդհուպ մինչև սահմանաչափի ամբողջական փակումը:
Նվազագույն և Առավելագույն ժամկետ/ ամիս	1 - 120	6-36	6- 12
Առավելագույն արտոնյալ ժամանակաշրջան/ ամիս	12	-	-
ՀՀ դրամով ֆիքսված տոկոսադրույք Փոփոխական տոկոսադրույք (փոփոխվում է 25-րդ ամսից սկսած)[2]	14.00%-16.00% 13.25%- 14.00%	14.50%-16.50%	16.00%-18.00%
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույք Փոփոխական տոկոսադրույք (փոփոխվում է 25-րդ ամսից սկսած)[2]	9.50%-11.00% 9.00%-10.50%	10.00%-11.50%	11.50%-14.00%
Եվրոյով ֆիքսված տոկոսադրույք	8.0%- 9.50%	9.00%-10.50%	10.50%-11.50%
Չօգտագործված գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք	-	Մինչև 2%	-

Մարման կարգը	ամսական անուիտետային/ հավասարաչափ վճարներ, Վարկի/լիզինգի տոկոսագումարները վճարվում են ամսական պարբերականությամբ	Վարկի տոկոսագումարները վճարվում են ամսական պարբերականությամբ	Օվերդրաֆթների դեպքում ստացված գումարը 45 օրվա ընթացքում ենթակա է ամբողջական մարման
Լիզինգային ֆինանսավորման դեպքում կանխավճարի չափ	Նվազագույնը լիզինգի առարկայի արժեքի 20% (լիզինգի կանխավճարի ապահովագրության դեպքում, կանխավճարի չափը կարող է սահմանվել 0%)		
Տրամադրման միջնորդավճար՝ նվազագույն վճարը վճարվում է վարկային հայտը ներկայացնելու պահին: Վարկը հաստատվելու դեպքում լրացվում է պակաս վճարված գումարը, իսկ մերժվելու դեպքում՝ վերադարձվում է առանց որևիցե պահումների	0.5%, նվազագույնը 50,000 դրամ,		0.25%, min.25,000 ՀՀ դրամ
ՎԶԵԲ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՓՄՁ-ՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ II ՓՈՒԼ			
1վարկի/լիզինգի նվազագույն/առավելագույն գումար	**1,000,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000,000 ՀՀ դրամ**		

Թիրախային ընկերությունների սեգմենտ և նպատակ	Վերականգնվող էներգիայի, Էներգոարդյունավետության, «կանաչ» կառուցապատման, Էլեկտրական փոխադրամիջոցների, Բնական պաշարների կայուն օգտագործման նպատակով ներդրումներ իրականացնող գործող միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ[1]: Վարկը տրամադրվում է կապիտալ ներդրումներ կատարելու նպատակով[2]:
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույք	12.00% – 12.50%
ՀՀ դրամով ֆիքսված տոկոսադրույք	15.25% – 16.00%
Առավելագույն ժամկետ/տարի	2 - 5 տարի
Տրամադրվող վարկային գործիք	Վարկ, լիզինգ
Առավելագույն արտոնյալ ժամկետ/ամիս	6 ամիս
Հատուկ նշումներ	1. Ներդրումների առնվազն 70%-ը պետք է ունենան էներգախնայողության բաղադրիչ 2. **Ծրագրի շրջանակներում ֆինանսավորման ենթակա չեն** հողի գնումը, հանքաարդյունաբերության և ճանապահաշինարարության ոլորտում ներդրումները, հարկերի վճարումը, ֆինանսական և ապահովագրական կազմակերպությունների վարկավորումը, կարճաժամկետ ներդրումները անշարժ գույքի ոլորտում (օրինակ բնակելի կառուցապատումը, վերաֆինանսավորումները), ՀՀ տարածքից դուրս ներդրումները, **3.** Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտներում ներդրումների խրախուսման նպատակով որոշ նախագծերի համար նախատեսված է դրամաշնորհ: Դրամաշնորհի վճարումը կարող է տրամադրվել ներդրումային ծախսերի մինչև 15 տոկոսի չափով : Որոշումը կայացվում է ծրագրի խորհրդատուների կողմից 4. Այս ծրագիրը համատեղելի է ՀՀ պետական սուբսիդավորման ծրագրերի հետ
Տրամադրման միջնորդավճար՝ նվազագույն վճարը վճարվում է վարկային հայտը ներկայացնելու պահին: Վարկը հաստատվելու դեպքում լրացվում է պակաս վճարված գումարը, իսկ մերժվելու դեպքում՝ վերադարձվում է առանց որևիցե պահումների	0.5%, նվազագույնը 50,000 դրամ,

[1] Համաձայն ԵՄ դասակարգիչի

[2] Հնարավոր է ֆինանսավորել մինչև 30 տոկոսի չափով շրջանառու միջոցներ, որոնք անմիջական կապ ունեն ֆինանսավորվող կապիտալ ներդրումների հետ

Վաղաժամկետ մարման տույժ	Վաղաժամկետ մարվող գումարի 5%-ը (0%, եթե վաղաժամկետ մարումը կատարվում է ստացված դրամաշնորհի միջոցներից)
Լիզինգային ֆինանսավորման դեպքում կանխավճարի չափ	Նվազագույնը լիզինգի առարկայի արժեքի 20% (լիզինգի կանխավճարի ապահովագրության դեպքում, կանխավճարի չափը կարող է սահմանվել 0%)
ՎԶԵԲ ՄՓՄՁ ԾՐԱԳԻՐ	
1 վարկի/լիզինգի նվազագույն/առավելագույն գումար	մինչև 190,000,000 ՀՀ դրամ
Թիրախային ընկերությունների սեգմենտ և նպատակ	ՀՀ-ում գործունեություն իրականացնող Փոքր և Միջին Ձեռարկություններ[3]: Վարկը տրամադրվում է կապիտալ ներդրումներ և շրջանառու միջոցների համալրում կատարելու նպատակով
ԱՄՆ դոլարով փոփոխական/ֆիքսված տոկոսադրույք	9.50-10.50%
ՀՀ դրամով փոփոխական/ֆիքսված տոկոսադրույք	12.75%-14.50%
Առավելագույն ժամկետ/տարի	60 ամիս[4]
Տրամադրվող վարկային գործիք	Վարկ, լիզինգ
Առավելագույն արտոնյալ ժամկետ/ամիս	Մինչև 12 ամիս

[3] Համաձայն ԵՄ դասակարգիչի

[4] Ծրագրային ֆինասավորման պայմանգրի ժամկետը լրանում է 17/11/2029թ.-ին:

Հատուկ նշումներ	1.Ծրագրի շրջանակներում ֆինանսավորման ենթակա չեն հողի գնումը, հանքարդյունաբերության և ճանապարհաշինարարության ոլորտում ներդրումները, հարկերի վճարումը, ֆինանսական և ապահովագրական կազմակերպությունների վարկավորումը, կարճաժամկետ ներդրումները անշարժ գույքի ոլորտում (օրինակ բնակելի կառուցապատումը, վերաֆինանսավորումները), ՀՀ տարածքից դուրս ներդրումները, 2.Այս ծրագիրը համատեղելի է ՀՀ պետական սուբսիդավորման ծրագրերի հետ
Լիզինգային ֆինանսավորման դեպքում կանխավճարի չափ	Նվազագույնը լիզինգի առարկայի արժեքի 20% (լիզինգի կանխավճարի ապահովագրության դեպքում, կանխավճարի չափը կարող է սահմանվել 0%)
Տրամադրման միջնորդավճար՝ նվազագույն վճարը վճարվում է վարկային հայտը ներկայացնելու պահին: Վարկը հաստատվելու դեպքում լրացվում է պակաս վճարված գումարը, իսկ մերժվելու դեպքում՝ վերադարձվում է առանց որևիցե պահումների	0.5 %
ԳՀՀ «ՄՓՄՁ ԱՋԱԿՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	
Վարկի/լիզինգի նվազագույն/առավելագույն գումար	1,000,000 ՀՀ դրամից մինչև 160,000,000 ՀՀ դրամ
Թիրախային ընկերությունների սեգմենտ և նպատակ	ՀՀ օրենսդրությամբ ՓՄՁ դասակարգմանը բավարարող ընկերություններ: Կապիտալ ներդրումներ, շրջանառու միջոցներ, գործառնական ծախսեր և այլն:
ՀՀ դրամով ֆիքսված տոկոսադրույք Փոփոխական տոկոսադրույք	11.00%-12.50%
Առավելագույն ժամկետ/տարի	Մինչև 5 տարի

Առավելագույն արտոնյալ ժամկետ/ամիս	Մինչև 18 ամիս
Հատուկ նշումներ	**Ծրագրի շրջանակներում ֆինանսավորման ենթակա չեն** սպառողական վարկեր, հիփոթեքային վարկեր նախատեսված բնակության համար նախատեսված անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման համար, ոչ մասնավոր շահառուներ, վերականգնվող վարկային գծեր, նախագծային վարկեր, և այլն...
Լիզինգային ֆինանսավորման դեպքում կանխավճարի չափ	Նվազագույնը լիզինգի առարկայի արժեքի 20% (լիզինգի կանխավճարի ապահովագրության դեպքում, կանխավճարի չափը կարող է սահմանվել 0%)
Տրամադրման միջնորդավճար՝ նվազագույն վճարը վճարվում է վարկային հայտը ներկայացնելու պահին: Վարկը հաստատվելու դեպքում լրացվում է պակաս վճարված գումարը, իսկ մերժվելու դեպքում՝ վերադարձվում է առանց որևիցե պահումների	0.5%, նվազագույնը 50,000 դրամ,
ԳՀՀ «ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՄՁ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	
Վարկի/լիզինգի նվազագույն/առավելագույն գումար	1,000,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000,000 ՀՀ դրամ
Թիրախային ընկերությունների սեգմենտ	ՀՀ օրենսդրությամբ սահմանվող ՓՄՁ դասակարգման չափանիշներին բավարարող ընկերություններ
ՀՀ դրամով ֆիքսված անվանական տոկոսադրույք	9.00%-10.50%
Առավելագույն ժամկետ/տարի	Մինչև5 տարի
Առավելագույն արտոնյալ ժամկետ/ամիս	6 ամիս
Հատուկ նշումներ	**Ծրագրի շրջանակներում ֆինանսավորման ենթակա չեն** սպառողական վարկերը, հիփոթեքային վարկերը՝ նախատեսված բնակության համար նախատեսված անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման համար, ոչ մասնավոր շահառուներին (որոնք տիրապետում են 50 տոկոսը չգերազանցող Հայաստանի ռեզիդենտ սեփականտերերի մասնաբաժնով) տրամադրվող վարկերը, դրամախաղային գործունեությանը առընչվող վարկերը, արժեթղթերի և արտարժույթի առուվաճառքի հետ առընչվող վարկերը, Վարկառուի տնտեսական գործունեության հետ ուղղակիորեն

	չկապված ավտոմեքենաների ձեռք բերումը, այլ բանկերի կամ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների վերաֆինանսավորումը, IFC-ի բացառությունների ցանկում նշված գործունեությունները, հարկերի, տուրքերի, ինչպես նաև մաքսային վճարների իրականացման նպատակով վարկերը։ **Որոշ նախագծերի էներգաարդյունավետության գնահատման նպատակով իրականացվում է համապատասխան էներգաաուդիտ**
Լիզինգային ֆինանսավորման դեպքում կանխավճարի չափ	Նվազագույնը լիզինգի առարկայի արժեքի 20% (լիզինգի կանխավճարի ապահովագրության դեպքում, կանխավճարի չափը կարող է սահմանվել 0%)
Տրամադրման միջնորդավճար՝ նվազագույն վճարը վճարվում է վարկային հայտը ներկայացնելու պահին: Վարկը հաստատվելու դեպքում լրացվում է պակաս վճարված գումարը, իսկ մերժվելու դեպքում՝ վերադարձվում է առանց որևիցե պահումների	0.5%, նվազագույնը 50,000 դրամ,
Չօգտագործված վարկի գումարի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք	-
Ստորև ներկայացված պայմանները կիրառելի են բոլոր ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի պարագայում	
% հաշվարկման կարգը	%-ը հաշվարկվում է վարկի գումարի նվազող մնացորդի նկատմամբ՝ հիմք ընդունելով տարին 365 օր/ ծրագրային վարկերի դեպքում, պայմանավորված ծրագրի պայմաններով, հնարավոր է՝ 360 օր
Տրամադրման եղանակը	Անկանխիկ
Մարման կարգը	ամսական անուիտետային/ հավասարաչափ վճարներ, Վարկի տոկոսագումարները վճարվում են ամսական պարբերականությամբ
Չվերականգնվող վարկային գծի օգտագործման ժամկետ	4 ամիս, որից հետո տվյալ ժամկետը կարող է երկարաձգվել ևս 4 ամսով՝ չօգտագործված գումարի դիմաց գանձելով 0.5% միջնորդավճար

Վարկի հաստատումից 45 օր անց վարկի վերահաստատման միջնորդավճար	Մինչև 50,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթային վարկերի դեպքում 25,000 ՀՀ դրամ, 50,000,000 ՀՀ դրամից ավել կամ համարժեք արտարժույթային վարկերի դեպքում 50,000 ՀՀ դրամ
Ապահովությունը	անշարժ գույք, հիմնական և շրջանառու միջոցներ, բաժնեմասեր/ բաժնետոմսեր, երրորդ անձանց երաշխավորություններ
Վարկ/գրավ առավելագույն սահմանաչափ	մինչև 80%
Գրավի ապահովագրության պահանջ	բանկի պահանջով, առնվազն վարկի մնացորդի չափով -
Ապահովագրության մոտավոր տարեկան ծախսը/%	• Անշարժ գույքի տարեկան ապահովագրավճարը կազմում է գույքի արժեքի 0,15-0.3 տոկոսը, • Սարքավորումների տարեկան ապահովագրավճարը կազմում է գույքի արժեքի 0.2-0.5 տոկոսը, • Շրջանառու միջոցների տարեկան ապահովագրավճարը կազմում է գույքի արժեքի 0.3-0.5 տոկոսը, • Տրանսպորտային միջոցների տարեկան ապահովագրավճարը սկսվում է գույքի արժեքի 2,5 տոկոսից:
Գրավի գնահատում	Ըստ պահանջի՝ բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպության կողմից
Գրավի գնահատման մոտավոր ծախս յուրաքանչյուր գույքային միավորի համար	Բնակելի հատվածի գույքի գնահատման համար՝ սկսած 15,000 ՀՀ դրամից Ոչ բնակելի հատվածի գույքի գնահատման համար՝ սկսած 25,000 ՀՀ դրամից, Տրանսպորտային միջոցների գնահատման համար՝ սկսած 8,000 ՀՀ դրամից **Մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տես Բանկի հետ համագործակցող մասնագիտացված գնահատող կազմակերպությունների ցանկը**
Վարկի գումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%
Տոկոսագումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%
Ժամկետանց վարկի գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք	նախատեսված է ՀՀ Քաղ. Օրենսգրքի 411 հոդվածի պահանջներով

Վաղաժամկետ մարման դեպքում տույժ մարվող գումարից (վարկային գծի դեպքում տույժը հաշվարկվում է սահմանաչափի գումարից)	Այլ ֆինանսական կառույցներից վերաֆինանսավորվելու դեպքում մինչև վարկի գործողության ժամկետի 1/2-ը մարելու պարագայում 3%, իսկ 1/2-ից հետո մարելու պարագայում՝ 1%: Սեփական միջոցներով մարելու դեպքում՝ 0%: Վերականգնվող վարկային գծերի դեպքում ՝ 2%
Վարկի գումարը կամ դրա մի մասը ոչ նպատակային օգտագործելու դեպքում՝ տույժ	Ոչ նպատակային օգտագործած գումարի 10%-ի չափով
Գործող պայմանագրի (վարկային, գրավի, բանկային երաշխիքի տրամադրման, այլ) պայմանների փոփոխություն	Մինչև 50,000 ՀՀ դրամ *Գործող պայմանագրի փոփոխություն են համարվում առնվազն հետևյալ դեպքերը, եթե այլ դեպքերի համար առանձին որոշում չկայացվի Բանկի Վարկային Կոմիտեի կողմից՝* • *վարկային պայմանագրով սահմանված մարումների ժամանակացույցի վերանայումը, եթե նշվածի համար նախատեսված չէ վաղաժամկետ մարման համար սահմանված տույժի վճարում,* • *հաճախորդի դիմումի համաձայն վարկային պայմանագրի այլ պայմանների (տոկոսադրույք, վարկի նպատակ, տարամադրման եղանակ և այլն) փոփոխությունը,* • *հաճախորդի դիմումի համաձայն ապահովության, այդ թվում՝ գրավի կամ երաշխավորության պայմանագրի հիմնական պայմանների փոփոխությունը, գրավի կամ երաշխավորության վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի ազատումը և այլն* • *սակագինը չի տարածվում այն պայմանագրերի փոփոխության վրա, որոնց փոփոխությունը մեկ այլ պայմանագրի փոփոխության հետևանք է*
Վարկի տրամադրման որոշման մասին հաճախորդին տեղեկացում	հաճախորդի կողմից վարկի վերլուծության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց 2-10 աշխատանքային օրվա ընթացքում, կախված վարկի գումարից և հաճախորդի բանկում սպասարկման պատմությունից
Վարկը փաստացի տրամադրելու ժամկետը	հաճախորդի կողմից վարկի ձևակերպման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում
Հաստատված/ դեռ չտրամադրված վարկի պայմանների վերանայում	Մինչև 50,000 դրամ
Գրավի ձևակերպում	• նոտարական վճար – միանվագ 13.000-25.000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի դեպքում, (գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքերի դեպքում՝ մինչև 10,000 ՀՀ դրամ), • անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վճար՝ առավելագույնը 26.400 ՀՀ դրամ (գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքերի դեպքում՝ մինչև 4,000 ՀՀ դրամ), • Տրանսպորտային միջոցի գրավադրման դեպքում կատարվող վճարներ (միասնական տեղեկանքի և

	շարժական գույքի գրավադրման համար) – միանվագ ընդհանուր 5.000 ՀՀ դրամ:

ՀՀ Կառավարության «Արտադրողականության խթանման միջոցառման» շրջանակներում տրամադրվող վարկեր/լիզինգներ

Պայման	Վարկ	Լիզինգ
Նվազագույն և առավելագույն գումարը/ ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000,000 ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000,000 ՀՀ դրամ
Թիրախային ընկերությունների սեգմենտ	Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված և գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը	
Առավելագույն ժամկետ	120 ամիս	
Առավելագույն մայր գումարի վճարման արտոնյալ ժամանակաշրջան /ամիս/	Մինչև 6 ամիս	
Սուբսիդավորման ժամանակահատվածը	Մինչև 42 ամիս	
ՀՀ դրամով ֆիքսված տոկոսադրույք	14.50%-15.50%	14.50%-15.50%
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույք	10.00%- 11.00%	10.00%- 11.00%
Եվրոյով ֆիքսված տոկոսադրույք	8.00%- 9.50%	8.00%- 9.50%
ՀՀ դրամով տրամադրված վարկերի/լիզինգների տոկոսադրույքներ սուբսիդավորման չափ	8%	10%
Արտարժույթով տրամադրված վարկերի/լիզինգների տոկոսադրույքույքներ սուբսիդավորման չափ	6%	8%
Վաղաժամկետ մարման դեպքում տույժ մարվող գումարից	0%	
Լիզինգային ֆինանսավորման	Նվազագույնը լիզինգի առարկայի արժեքի 20% (լիզինգի կանխավճարի ապահովագրության դեպքում,	

դեպքում կանխավճարի չափ	կանխավճարի չափը կարող է սահմանվել 0%)
Հատուկ նշումներ	1. Օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկերի/լիզինգի սուբսիդավորվող մասի առավելագույն գումարը յուրաքանչյուր տնտեսավարողի համար յուրաքանչյուր վարկի/լիզինգի համար սահմանվում է 2021թ-ին և դրանից հետո կանոնադրական կապիտալում կատարված ներդրման հնգապատիկի չափով, բայց ոչ ավելի, քան 10 մլրդ դրամ (արտարժույթով վարկավորման մասնաբաժինը՝ 5 մլրդ դրամին համարժեք դրամ)՝ փոխկապակցված կազմակերպությունների խմբի մեջ ներառված տնտեսավարողների՝ միջոցառման շրջանակներում տրամադրված վարկի/լիզինգի սուբսիդավորվող մասի հանրագումարով, ընդ որում, սուբսիդավորման ամբողջ ժամանակահատվածում կանոնադրական կապիտալի նվազեցում չի թույլատրվում: 2. Վերը նշված արտոնությունը չի տարածվում D(ԴԻ) «ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» և «F (ԷՖ) «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վրա: 3. Սույն նպատակային ծրագրի արտոնությունից օգտվող տնտեսավարողները մինչև վարկի/լիզինգի պայմանագրի ստորագրումը պարտավոր են ֆինանսական կազմակերպությանը ներկայացնել կանոնադրական կապիտալի համալրումը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև կանոնադրական կապիտալում 200 մլն դրամ և ավելի ներդրում իրականացրած տնտեսավարողը պայմանագրի ստորագրմանը հաջորդող տարվա ընթացքում և դրան հաջորդող սուբսիդավորման տարիների ամբողջ ընթացքում պարտավորվում են ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվետվություններ, ինչպես նաև 500 մլն դրամ և ավելի շրջանառություն ունեցող աուդիտորական ընկերությունների կողմից արտաքին աուդիտի եզրակացություն: 4. Լիզինգառուն լիզինգի առարկայի արժեքի կանխավճարի փոխարեն կարող է ներկայացնել կանխավճարի գումարի ապահովագրության :

[1]- Արտահանող ընկերություններին տրամադրվում են հավելյալ զեղչեր և արտոնություններ

[2]- Փոփոխական տոկոսադրույք սահմանելիս Բանկը յուրաքանչյուր դեպքում պայմանագրով սահմանում է փոփոխական տոկոսադրույքի հիմքում ընկած ցուցանիշները (ՓՑ), որոնց փոփոխությամբ պայմանավորված են լինելու տոկոսադրույքի հետագա փոփոխությունները, ինչպես նաև դրան գումարվող հաստատուն բաղադրիչը: Նշված ցուցանիշների սահմանման և տոկոսադրույքի վերանայման կանոնները հետևյալն են՝

ՀՀ դրամով վարկերի դեպքում 25-120 ամիսների համար ՓՑ +(5.5-6.5%), ,

ՀՀ դրամով վերականգնվող վարկային գծերի դեպքում 25-36 ամիսների համար ՀՑ +(6.00%-8.5%),

ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար հիմնական ցուցանիշ է հանդիսանում ՀՀ դրամով կնքված ռեպո գործառնությունների միջին կշռված տոկոսադրույքը , որն արտացոլվում է https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx էջում: Եթե հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում լողացող տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հիմք է ընդունվում երկրորդային ցուցանիշը, ՀՀ պետական

արժեկտրոնային 6 ամսվա պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx էջում:

Վարկի լողացող տոկոսադրույքը ՀՀ դրամի դեպքում՝ կարող է փոփոխվել (բարձրանալ կամ նվազել) հաստատված տոկոսադրույքից առավելագույնը 3%-ով (առավելագույն և նվազագույն շեմ):

ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում 25-120 ամիսների համար ՓՑ1* (հիմնական ցուցանիշ) + (6.25%-8.0%), հիմնական ցուցանիշի անհասանելիության դեպքում ՓՑ2(երկրորդային ցուցանիշ) + (4.25%-6.00%)

ԱՄՆ դոլարով վերականգնվող վարկային գծերի դեպքում 25-36 ամիսների համար ՓՑ1* (հիմնական ցուցանիշ) + (6.75%-7.50%), հիմնական ցուցանիշի անհասանելիության դեպքում ՓՑ2(երկրորդային ցուցանիշ) +(4.75%-5.50%)

ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար հիմնական ցուցանիշ (**ՓՑ1**) է հանդիսանում ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված 181 օրից մինչև 1 տարի ժամկետայնությամբ դոլարային ավանդների միջին կշռված տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx - Էջում:

Եթե հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում լողացող տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հիմք է ընդունվում երկրորդային ցուցանիշը (ՓՑ2)՝ ԱՄՆ Գանձապետական ուղենիշային պարտատոմսերի 6 ամսվա մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.treasury.gov/resource-center/data-chart-center/interest-rates/Pages/TextView.aspx?data=yield էջում:

Վարկի լողացող տոկոսադրույքը ԱՄՆ դոլարի դեպքում՝ կարող է փոփոխվել (բարձրանալ կամ նվազել) հաստատված տոկոսադրույքից առավելագույնը 2%-ով (առավելագույն և նվազագույն շեմ):

Փոփոխական տոկոսադրույքով տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, անկախ տրամադրման ամսաթվից, ենթակա են վերանայման կես տարին մեկ՝ փետրվար և օգոստոս ամիսներին, ընդ որում փետրվար ամսին վերանայման համար հիմք է ընդունվում օգոստոս-հունվար ամիսներին յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ հրապարակված ցուցանիշների միջին թվաբանականը, իսկ օգոստոս ամսին՝ փետրվար-հուլիս ամիսների միջին թվաբանականը: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում վերջինիս մասին հաճախորդին ծանուցելուց 30 օր հետո: Որոշ դեպքերում, պայմանագրով կարող են սահմանվել տոկոսադրույքի վերանայման այլ ժամկետներ: